**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ----------  2023թ.** **N------Ա**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն անվանի կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Խորենացու փողոցի հ.25 հասցեում փակցնելու համար:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ** **ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անվանի կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանը ծնվել է 1930 թվականի օգոստոսի 28-ին, Երևանում:

Նրա երաժշտական ընդունակությունները բացահայտվել են վաղ հասակում: Սակայն, նա երաժշտական կրթությունն ստացել է միայն 14 տարեկանից: Սովորել է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում: Միաժամանակ ընդգրկվել է Պիոներ պալատի փողային նվագախմբում՝ որպես շեփորահար:

1953-1957 թվականներին սովորել և ավարտել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի կոմպոզիտորական բաժինը՝ արվեստի վաստակավոր գործիչ Էդվարդ Բաղդասարյանի դասարանը: Ուսումնարանն ավարտելուց հետո ընդունվել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կոմպոզիտորական ֆակուլտետը՝ Գրիգոր Եղիազարյանի դասարանը:

1955 թվականից աշխատել է Երևանի Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում՝ որպես շեփորահար, 1960-1979 թվականներին՝ որպես երաժշտական մասի ղեկավար և դիրիժոր: 1963-1981 թվականներին տեսական առարկաներ է դասավանդել երաժշտական ուսումնական հաստատություններում: 1960 թվականից ստեղծել և ղեկավարել է էստրադային և ժողովրդական նվագարանների նվագախմբեր, որոնք անընդմեջ մասնակցելով հանրապետական և համամիութենական բազմաթիվ մրցույթների, արժանացել են մրցանակների և պատվոգրերի:

1979-1986 թվականներին հանդիսացել է Հայաստանի Ռադիոյի և հեռուստատեսության «Արևիկ» մանկական վոկալ-գործիքային անսամբլի հիմնադիրն ու գեղարվեստական ղեկավարը: Այդ տարիներին «Արևիկը» արժանացել է հանրապետական, անդրկովկասյան և ԽՍՀՄ կազմավորման 60-ամյակին նվիրված մրցույթների դափնեկրի կոչմանը, իսկ մերձմոսկովյան Դուբնա քաղաքում՝ «Մեծ ոսկե» մեդալի:

1986-1995 թվականներին եղել է Հեռուստառադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական նվագարանների նվագախմբի դիրիժորը: 1995 թվականին Հայաստանի պաշտպանության նախարարության ներքո ստեղծել է «Էլեգիա» էստրադային համույթը, որը համերգներով հանդես է եկել Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: 1993-2007 թվականներին եղել է Մայր աթոռ սուրբ Էջմիածնի և Հայկական բարեգործական ընդհանուր միության հայորդաց տների երաժշտության գծով գլխավոր խորհրդատուն, Հեռուստառադիոյի կոմիտեի և ՀՀ Երգչախմբային ընկերության գեղարվեստական խորհուրդների անդամ, 2003 թվականից՝ ՀՀ երգչախմբային ընկերության պատվավոր անդամ:

Հեղինակել է մի շարք մեծ ու փոքր կտավի ստեղծագործություններ՝ սիմֆոնիկ, փողային, ժողովրդական, էստրադային, վոկալ և նվագարանային ժանրերում: Դրանք են՝ Սիմֆոնիա (4 մաս), 2 լարային կվարտետ, 4 վոկալ-սիմֆոնիկ պոեմներ, 4 մանկական կանտատներ, շեփորի կոնցերտ, կոնցերտինո սաքսոֆոնի համար, երաժշտական հեքիաթ «Արքայազն և փայտահատը», մանկական մյուզիքլ «Մկնիկ-հարսնացուն», սիմֆոնիկ փողային, ժողովրդական, էստրադային նվագարանների, ջութակահարների անսամբլի համար գրված պոեմներ, սյուիտներ, քայլերգեր, տարբեր նվագարանների

համար գրված սոնատներ, երկեր, շարքեր, ռոմանսներ և երգեր, խմբերգեր մեծերի և փոքրերի համար: Մեծ թվով մշակումներ, փոխադրումներ և գործիքավորումներ է կատարել սիմֆոնիկ, փողային, ժողովրդական և էստրադային նվագախմբերի և պարզապես նվագարանների համար, անդրադառնալով ժողովրդական երգերին՝ հայ, ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններին: 1957-2008 թվականների ընթացքում նրա ստեղծագործություններից 77-ն արժանացել են հանրապետական և համամիութենական մրցանակների: Նրա հեղինակած ավելի քան 300 ստեղծագործություն ընդգրկված է Հայաստանի հանրային ռադիոյի ոսկե ձայնադարանում:

Ռոբերտ Պետրոսյանը մահացել է 2008 թվականի փետրվարի 6-ին, Երևանում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ** **ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ռոբերտ Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ռոբերտ Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ** **ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**